# ԵՐԿՐԱ-ՀԱՆՔԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴՈԿՏՈՐ ՊՐՈՖԵՍՈՐ *ՄԻՐ ԱԼԻ ԿԱՇԿԱՅԻ* ՃԱՌԸ



ՍՍՌՄ Գիտությունների Ակադեմիայի Ադրբեջանական ֆիլիալի նախագահության և գիտական բոլոր աշխատողների կոլեկտիվի անունից ջերմորեն ողջունում եմ եղբայրական Հայաստանի գիտական աշխատողներին և սովետական հասարակայնությանը Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիա ստեղծվելու օրը:

Այս նշանավոր օրը՝ սովետական կուլտուրայի մեծ հաղթանակի և Լենինյան-Ստալինյան ազգային քաղաքականության փայլուն հաղթության օրը աշխատավոր և ընդունակ հայ ժողովուրդը նշում է Հայաստանի Սովետական իշխանության 23 տարիների ընթացքում իր ունեցած նվաճումները:

Նոր Ակադեմիայի իսկական անդամները երկրի ականավոր գիտական գործիչներն են:

Եղբայրական ռեսպուբլիկաների՝ Հայաստանի և Ադրբեջանի պատմության ու գիտության զարգացման մեջ, նրանց ժողովուրդների սպեցիֆիկայում, կենցաղում և բնավորության մեջ շատ ընդհանուր բան կա, այդ պատճառով էլ այսօրվա օրը մենք նշում ենք առանձնակի գոհունակությամբ և մեծագույն հրճվանքով:

Երկու ժողովուրդների արվեստի հնագույն ժամանակներից եկող գեղեցիկ հուշարձանները և նյութական կուլտուրայի մնացորդները ինչպես Հայաստանի, այնպես և Ադրբեջանի տերիտորիայում՝ չափազանց մեծ հետաքրքրություն են ներկայացնում գիտական հետազոտության համար:

Հայերը և ադրբեջանցիներն իրավունք ունեն պարծենալու իրենց հազարամյա կուլտուրայով: Հայ պատմագիրները նշանավոր փաստաթղթեր են թողել, որոնք ներկայումս հափշտակությամբ ուսումնասիրվում են և համաշխարհային կուլտուրայի նվաճումներ են:

Սկսած 12-րդ դարի ադրբեջանական մեծ բանաստեղծ Նիզամիից, ադրբեջանական շատ գրողներ ու մտածողներ, ինչպես Բաքիխանովը, Միրզա Ֆաթալի Ախունդովը, Ջալալ Մամեդկուլիզադեն և ուրիշները, իրենց երկերի մեջ մեծ ուշադրություն են նվիրել երկու ժողովուրդների բարեկամությանը:

Ի բարօրություն երկու ժողովուրդների, երկար տարիների ընթացքում միասին են աշխատել Միրզա Ֆաթալի Ախունդովը և Խաչատուր Աբովյանը:

Այսօր հայ ժողովուրդը իր անցյալ պատմության մեջ չտեսնված նվաճումներն ու հաղթանակներն է ցուցադրում, որոնք ձեռք են բերված Լենինի-Ստալինի մեծ պարտիայի ղեկավարությամբ: Սովետական Հայաստանը արդյունաբերության ու գյուղատնտեսության բնագավառում ձեռք բերված հսկայական հաջողությունների կողքին տարել է նաև փայլուն հաղթանակներ հայ ժողովրդի ձևով ազգային և բովանդակությամբ սոցիալիստական կուլտուրայի զարգացման ու ծաղկման գործում:

Այսօր Սովետական Հայաստանի կուլտուրայի պատմության մեջ գրվում է ևս մի փառավոր էջ՝ Գիտությունների Ակադեմիայի ստեղծումը:

Սրտանց ողջունելով հայ ժողովրդին այս հանդիսավոր օրը, ցանկանում ենք է՛լ ավելի մեծ հաջողություններ ի բարօրություն մեր փառապանծ հայրենիքի:

Կեցցե՛ն Սովետական Հայաստանի գիտնականները:

Կեցցե՛ մեր հաղթանակների ոգեշնչող, գիտության կորիֆեյ, հանճարեղ առաջնորդ, ՍՍՌՄ ժողովուրդների հայր, զորավար մեծ Ստալինը: (Բուռն օվացիա):